ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԳԻՐՔ ՊԻՏՈՅԻՑ»-Ի ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Книга хрий / Перевод с древнеармянского, предисловие и комментарии Г. Мурадян, редактор Л. Степанян, - Ереван, Наири, 2000

1993 թ. Երեւանի Մատենադարանը բանասէր Գոհար Մուրադեանի աշխատութեամբ հրատարակեց «Գիրք պիտոյից»-ի գիտական-քննական բնագիրը, իսկ հիմա բանասէրներին եւ ռուսերէնով ընթերցող մասնագէտներին, ուսանողութեանն է մատուցւում նոյն գրքի ռուսերէն թարգմանութիւնը՝ նորացուած առաջաբանով, ծանօթագրութիւններով, վերս տին բանասէր Գոհար Մուրադեանի աշխատասիրութեամբ:

Նախ, ինչպէս նկատել են այս գրքի հետազօտմամբ զբաղուած բոլոր հայագէտները, «Պիտոյից գիրքը» յունաբան դպրոցի թարգմանական այն յուշարձաններից է, որի գրաբարը խորքով հասկանալու համար ոչ միայն անհրաժեշտ է հայ հին լեզուի քաջ իմացութիւն, այլեւ ոչ պակաս կարեւոր է հելլենական մտածողութիւնը ճեւաւորած նշանաւոր մտածողների երկերի հետ որոշակի ծանօթութիւնը: «Պիտոյից գիրքը», որն աւանդաբար վերագրուել է պատմահայր Մովսէս Խորենացուն եւ պարբերաբար տպագրուել նրա «Մատենագրութեան» մէջ, երեւան է հանում հայ հին բարձրագոյն դպրոցում ճարտասանութեան աւանդման նախանձելի մակարդակը: Գրքի թարգմանիչը խոստովանում է բնագրի խրթնաբանութիւնը, որը նա կարողացել է յաղողութեամբ յաղթահարել գիտելիքների համապատասխան պաշարի առկայութեան շնորհիւ:

Գ. Մուրադեանն Առաջաբանում անդրադառնում է մի շարք էական խնդիրների, որոնցով հիմնաւորում է թարգմանական այս յուշարձանի՝ գիտա-հետազօտական բնագաւառում եղած առաջընթացի նոր ժամանակահատուածը: Գրքի առաջաբանում շարունակական կապ կայ հարցի պատմութեան եւ քննուող խնդիրներից բխող՝ հեղինակի եզրակացութիւնների միջեւ: «Պիտոյից գրքին» լրջօրէն անդրադարձել են անցեալի այնպիսի նշանաւոր հայագէտներ, ինչպիսիք են՝ Ն. Ադոնցը, Ն. Ակինեանը: Այս գիրքն անցեալի ու ներկայի օտարազգի հայագէտների ուշադրութեան կենտրոնում է եղել բազմաթիւ առիթներով՝ յատկապէս կապուած Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» ստեղծման ժամանակի խնդիրների հետ:

Գ. Մուրադեանը «Պիտոյից գիրքը» համարում է իւրօրինակ թարգմանութիւն՝ 4-րդ դարի վերջին եւ 5-րդ դարի առաջին կէսին գրուած «Նախակրթութիւնների» բիւզանդական ժողովածուից, որի հեղինակը եղել է Ափթոնիոսը: Բիւզանդական այդ ժողովածուն եւրոպական համալսարաններում օգտագործուել է որպէս ճարտասանական ուսումնական ձեռնարկ մինչեւ 17-18-րդ դարերը:

Թարգմանիչը բացատրում է, որ միջնադարեան Հայաստանում, ինչպէս եւ Բիւզանդիայում բարձրագոյն դպրոցը պահպանում էր իր աշխարհիկ ուղղուածութիւնը, եւ դա հիանալի երեւում է «Պիտոյից գրքի» բովանդակութիւնից: Նա անդրադառնում է «Պիտոյից գրքի» հայ թարգմանչի, աւելի շուտ՝ հայ հեղինակի խնդրին, որովհետեւ գիրքը ոչ թէ բառացի թարգմանութիւն է յունարէնից, այլ որոշակի փոփոխութիւնների ենթարկուած փոխադրութիւն:

«Պիտոյից գրքի» հայերէն ձեռագրի Վերջաբանի խորագրում առկայ է Մովսէս Քերթողի անունը: Հետազօտողը բերում է երկու հիմնական փաստարկներ, որոնցով

քիչ հաւանական է համարում Մովսէս Խորենացու՝ այդ գրքի հեղինակ լինելը: Դրանից առաջինը կապւում է «Հայոց պատմութեան» առաջին գրքին յաջորդող յաւելուածում յունական առասպելներին Խորենացու տուած հիացական գնահատականին: Պատմահայրը նշում է, թէ յունական առասպելներն իրենց մէջ թաքցրած ունեն իրականութիւնը: Ի հակադրութիւն այս հիացական գնահատականի՝ էւրիպիդէսի «Մեդէա» ողբերգութեանը վերաբերող «Պիտոյից գրքի» ընդարձակ մեկնողական հատուածում ենթադրեալ Մովսէս Խորենացին ոչ միայն չի հիանում յունական առասպելներով, այլեւ խիստ քննադատում է «Մեդէա» ողբերգութիւնը մտացածին ու սուտ լինելու պատճառով, առաւել վնասակար է համարում այն դաստիարակչական առումով: Այս առիթով Գ. Մուրադեանը գրում է. «Դժուար է պատկերացնել, որ երկու ստեղծագործութիւնները գրուած լինեն նոյն հեղինակի կողմից, թէկուզեւ տարբեր տարիներին» (էջ 27):

Ընդհանրապէս «Պիտոյից գրքի» բանասիրական խնդիրներին տրուած գնահատականում Գ. Մուրադեանը յաճախ է ելնում Նիկողայոս Ադոնցի դրոյթներից: Նա եզրակացնում է, որ «Պիտոյից գիրքը» մի հեղինակի գործ է, եւ այն զուգահեռում է Փիլոն Ալեքսանդրացու երկերի թարգմանական բնագրերի հետ ու գտնում ընդհանրութիւններ: Քանի որ Փիլոնի երկերի մի մասը հայ թարգմանական գրականութեան մէջ արդէն կային 5-րդ դարի 50-70-ական թուականներին, նա հաւանական է համարում հայագէտ Ս. Արեւշատեանի առաջարկած ժամանակը «Պիտոյից գրքի» թարգմանութեան համար՝ հինգերորդ դարի երրորդ քառորդ: Առաջաբանում մի քանի առիթով Գ. Մուրադեանն իրաւացիօրէն շեշտում է, որ «Պիտոյից գիրքը» գրաբարեան ամենադժուար հասկացուող բնագրերից է. կարծես, նա դրանով ուզում է կանխել հայ հին մատենագրութեան նկատմամբ թեթեւակի մօտեցման ամէն մի խոցելի մզում: Նա միաժամանակ նշում է, թէ հայերէն «Պիտոյից գիրքը» հաւանաբար հէնց դրա պատճառով էլ չի թարգմանուել այլ լեզուների, եւ փաստօրէն իր թարգմանութիւնը համարում է առաջինը:

Գ. Մուրադեանն անդրադառնում է իր պատրաստած «Պիտոյից գրքի» հայերէն քննական բնագրի վերաբերեալ Փիլոնի գրախօսականին եւ բանավիճում յօդուածում իր տեսակէտների՝ համոզիչ օրինակների բերելով 5-րդ դարի հայ մատենագիրների երկերից: Նա ընդհանրապէս յատկութիւն է մտցնում եւ բացատրում, թէ որոնք են «Պիտոյից գրքի» թարգմանական բառերը, եւ որոնք են կապւում հայ մատենագրութեան ճեւաւորուող աւանդոյթի հետ, որը բոլորովին չի հակասում արդէն քրիստոնէական դարձած ժամանակներում հելլենիզմի մտածողութեան դրսեւորմանը: «Պիտոյից գիրքը» հեթանոսականի եւ քրիստոնէականի այն կապող օղակներից էր, որոնք հասկանալի պատճառներով ընդհատուել էին 4-րդ դարում՝ քրիստոնէութեան ընդունումից յետոյ, եւ վերականգնութեան մտածողութեան հրամայականով, որը հաւաստում է, թէ մարդկութեան մշակոյթը չունի տեւական ընդհատում, այն շարունակական է՝ անցեալից դէպի ապագայ իր ընթացքի մէջ:

Ճանկալի կը լինէր, որ «Պիտոյից գրքի» առաջաբանում անդրադարձ լինէր եզնիկ Կողբացու «եղծ աղանդոցի» «եղծ քէշին պարսից» գլխի եւ «Պիտոյից գրքի» «Ճաղատս եղծման» հատուածի միջեւ նմանութեանը, քանի որ դրաքննադատական դրոյթների ընդհանրութիւնները վերոյիշեալ հատուածներում խիստ ակնյայտ են: Գուցէ ժամանակն է այս հազուագիւտ թարգ-

© National Library of Armenia

մանական յուշարձանի նաեւ աշխարհաբար թարգմանութեան. այդ ձեւով «Պիտոյից գիրքն» առաւել մատչելի կդառնայ ժամանակակիցներին:

Գ. Մուրադեանը յիրաւի կատարել է խիստ շնորհակալ մի գործ՝ իւրովի հարստացնելով հայ թարգմանական գրականութեան գանձարանը, որն արդէն բազմագանձ է իր 1700-ամեայ երկարատեւ ճանապարհին:

Ալիտա Դոլուխանեան

ԱԾՏԱՆԱԿ (ՀԱՅԱԳԻՏԱՓԱՆ ՊԱՐԲԵՐԱԳԻՐՔ), ՀԱՏՈՐ Գ, ՀԻՄՆԱԴԻՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, ԵՐԵՒԱՆ, ՆԱԻՐԻ, 2000, 186 ԷՋ

«Աշտանակի» Գ հատորն, ի տարբերութիւն առաջին երկուսի, պարունակում է օտարերկրեայ հայագէտների յօդուածները՝ բնագրի լեզուով (բացի Ջ. Տրայինայի յօդուածից, որը ներկայացուած է թարգմանաբար):

Հատորը նուիրուած է անուանի հայագէտ Արտաշէս Մարտիրոսեանի (1930-1998) յիշատակին եւ սկսւում է նրա վերջին յօդուածով՝ «Հայաստանի քրիստոնէական դարձի թուականը» (էջ 13-23): Հիմնուելով Եւսեբիոս Կեսարացու եւ Մովսէս Խորենացու հաղորդած տուեալների վրայ՝ հեղինակը փորձել է ցոյց տալ, որ Ա. Աննինսկու, Ց. Մանանդեանի, Պ. Անանեանի, Գ. Սարգսեանի, Լ. Խաչիկեանի, Կ. Իւզբաշեանի եւ այլոց ընդունած հայոց դարձի թուականը՝ 314, անհաւանական է, քանի որ, ըստ Եւսեբիոսի, հայերը 313 թ. արդէն քրիստոնեայ էին: Տրդատ III-ի գահակալումը պէտք է տեղի ունեցած լինէր 286/7 թ., իսկ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը՝ 301/2 թ.: Ա. Մարտիրոսեանը եզրակացնում է, որ դարձի հաւանական թուականն է 299-ը:

Ալեսսանդրո Օրենգոյի «17-րդ դարի մի նամակ՝ գրուած վաճառականական հայերէնով» (Una lettera del XVII secolo, scritta nell' "Armeno dei mercanti") (էջ 24-35) յօդուածը De propaganda fide միաբանութեան դիւանում պահուող՝ մի հարուստ նորջուղայեցի վաճառականի՝ միաբանութեան կարդինալին գրած նամակի հրապարակումն է՝ մանրամասն լեզուական վերլուծութեամբ:

Մանէ-Էռնա Շիրինեանի՝ «Մեկնողական ժանրի կազմաւորումը եւ զարգացումը Հայաստանում» (էջ 36-64) յօդուածում ուսումնասիրուած են ժանրի ակունքները, նրա զարգացումը յունական գրականութեան մէջ, ինչպէս նաեւ նրա, մասնաւորապէս՝ «արտաքին եւ նուրբ գրոց» մեկնութիւնների բազմապիսի տարբերակները հայկական միջավայրում: Այդ տարբերակները զուգադրուած են յունարէն համարժէքների հետ եւ փաստարկուած են օրինակներով:

Յոս Վայտենբերգի «Դիոնիսիոս Թրակացու մօտ հայերէն «դալապր» եւ «սուր» բառի ժամանակը» (Chronology of the Armenian Դալապր and "Sword" in Dionysius Thrax) (էջ 65-70) յօդուածը նուիրուած է լատիներէն dolabra բառի փոխառութեանը: Խօսելով «երկրորդ հայկական բաղաձայնային տեղաշարժի» մասին, որը բաժանել է բարբառները հիւսիսայինի՝ «խլացումով» եւ հարաւայինի՝ «առանց խլացման» տարածաշրջանների, նա կապում է խնդրոյ առարկայ բառը վերջինի հետ: Ապա, ելնելով այն պատկերացումից, որ այդ երեւոյթը տեղի է ունեցել 7-րդ դարում, Թրակացու թարգմանութիւնը թուագրում 6-րդ դարի վերջով:

Արամ Թոփչեանի «Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան յունաբանութիւնները» (էջ 71-83) յօդուածում քննութեան են առնուած պատմահօր լեզուի շարահիւսական ու ձեւաբանական յունաբանութիւնները՝ յունաբան դպրոցի առաջին շրջանի թարգ-

մանութիւնների համեմատութեամբ: Նշւում է, որ նրանում չեն դիտւում աւելի ուշ շրջանի թարգմանութիւններին բնորոշ յատկանիշներ: Շեշտւում է այն հանգամանքը, որ «Հայոց պատմութեան» լեզուի ուսումնասիրումը կարող է նպաստել նաեւ ժամանակագրական ու որոշ աղբիւրագիտական հարցերի լուսաբանմանը:

Ռոբերտ Թոմսոնի «Կանոնական եւ աշխարհիկ իրաւունքը Մխիթար Գոշի մօտ» (Canon Law and Secular Law in Mxit'ar Goš) (էջ 84-92) յօդուածը նուիրուած է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» եւ նրա հիմնական աղբիւրներից մէկի՝ հայկական կանոնագրքի փոխյարաբերութեանը: Դիտելով մարդուն որպէս հոգու եւ մարմնի միացութիւն՝ Գոշն անհրաժեշտ էր համարում եկեղեցին՝ Գոշն անհրաժեշտ էր համարում եկեղեցական եւ աշխարհիկ օրէնքների գոյակցութիւնը, սակայն նա, ըստ Թոմսոնի, աւելի շուտ հոգեւոր հովիւ էր, քան արդի իմաստով իրաւագէտ:

Հրաչեա Թամրազեանը «Խոսրով Անձեւացու «Մեկնութիւն ժամակարգութեան» երկն՝ իբրեւ կրթական ձեռնարկ, եւ նրա դերը Նարեկեան դպրոցի գիտական եւ կրթական համակարգի ձեւաւորման գործում» (էջ 93-98) յօդուածում անդրադարձել է Գրիգոր Նարեկացու հօր ուսուցողական նպատակներով գրուած գրքի բովանդակութեանը, նրանում կիրառուած մեկնողական մեթոդներին, արտացոլուած կրթական ծրագրին, Նարեկեան դպրոցի կազմակերպման շրջանում այդ գրքի նշանակութեանը:

Գոհար Մուրադեանի «Պիտոյից գրքի ոչ թարգմանական մասերի լեզուն եւ հայ հեղինակների յունաբանութիւնները» (էջ 99-122) յօդուածում դիտարկուած են մի շարք ինքնուրոյն երկերում աւանդուած շարահիւսական, ձեւաբանական եւ բառային յունաբանութիւնները, մատնանշուած են դրանց զուգահեռները թարգմանական տեքստերում, մասնաւորապէս՝ Փիլոն Ալեքսանդրացու մօտ: Դրանով իսկ հաստատւում է, որ Գոհար Մուրադեանի՝ «Պիտոյից գրքի» նախակրթութիւնների ոչ թարգմանական բնոյթի մասին թեզը փաստարկուած է:

«Զենոն կայսեր «Հենոտիկոնը» եւ Հայոց եկեղեցին» (էջ 123-129) յօդուածում Վրէժ Վարդանեանը համակարծիք է Նինա Գարսոյեանի հետ, որ «Հենոտիկոնն» ընդունուել է Հայոց եկեղեցու կողմից 5-րդ դարի 90-ական թուականների սկզբին: 506 թ. Դուինի ժողովում մէկ անգամ եւս ընդգծուեց հայերի հաւատարմութիւնը նիկիական «Հաւատոյ հանգանակին»՝ ի հակադրութիւն քաղկեդոնականութեան:

Ջուստո Տրայինայի «Փաւստոս Բիւզանդացին, Պրոկոպիոսը եւ Հայոց պատմութիւնը (Jacoby, FGrHist 679.3-4)» (էջ 130-141) յօդուածում խօսւում է այն մասին, որ Պրոկոպիոսը «Հայոց պատմութիւն» ասելով կարծել են, թէ դա Փաւստոս Բուզանդի «Պատմութիւնն» էր), այլ պատմական աղբիւր է ունեցել ոչ թէ կոնկրետ երկ (ոմանք նկատի ունէին Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը) եւ «էպիկական պատմութիւններ»:

Էդդա Վարդանեանի «15-րդ դարի անվանի ձեռագրի պատառիկներ» (էջ 142-152) յօդուածը նուիրուած է 19-րդ դարի յայտնի ֆրանսիացի հնագէտ Ժան Պոզզիի հաւաքածուի՝ աճուրդներում վաճառուած, 1454 թ. Մինաս մանրանկարչի նկարազարդած՝ Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկէից թղթոց»-ի պատառիկներին: Մանրանկարների ոճի եւ պատկերագրու-

© National Library of Armenia